

դեռ «ի տնդիս տեղիս» կը հետեւէին հին դրութեան, կ'ըսէ Կիրակոս, եւ կը համարի թէ նոյն վարդապետին արգելքն «հաստատութիւն կալաւ յամենայն տեղիս» (106): Բայց այդ ընդունելութիւնը չափաւոր կամ կարճատեւ եղած է. այնպէս որ ժե դարուն Սիմէոն Այրիվանեցին հարկադրեցաւ կրկնել նախորդաց պահանջը. եւ այն ալ միայնակեցաց եւ ապաշխարողաց համար միայն (Հյպտ. 570): Միով բանիւ՝ անդուլ պայքարն ու յամառութիւնը՝ ոմանց փափուկ բռնելու երկու օրերը եւ ոմանց խստացնելու՝ չեն պակսիր բնաւ մեր մէջ:

Ծ. — Բ եւ Գ. Քառասնորդը: — Ա. Այս պահերը կը կանխէին վարդապետն ու Յայտնութիւնը (Ալաւ. ՂԱ. Քրգ. ձմր. 497), յիշուած նաեւ վանականէն առանց անուան տօներուն (Հրցմ.): Բնիկ ազգային կը թուին ասոնք եւ շատ հին են. գոնէ երկրորդը կը յիշուի արդէն Ս. Սահակայ կանոնաց մէջ՝ այս ձեւով. «Տօն սրբոյ Յայտնութեան եւ քառասնորդը նորա» (111): Իսկ երկուքին միանգամայն կը պատահինք ը դարուն Խոսրովկայ քով՝ «գերիս յիսներևակսն» բացատրութեամբ (աստ, 426), եւ յետոյ աւելի ստէպ ալ: — Տաթեւացին՝ զատկականն «աղուհացից»